«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № «ԳՀԱՊՁԲ-2018/2-3-1(ԵՊԲՀ)»

ք. Երևան «24» մայիսի 2018թ.

<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամը, ի դեմս ռեկտոր **Ա. Ա. Մուրադյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և << Ֆոտոն>> **ՍՊԸ-ն,** ի դեմս Ընկերության տնօրեն՝ **Ն. Պետրոսյանի,** որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված սննդամթերք (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են,

2.1.8 Գնորդ ապրանքի և հարակից ծառայությունների մասին անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1829932 (մեկ միլիոն ութ հարյուր քսանինը հազար ինը հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

<<ԳՆՈՐԴ>>	«ՎԱՃԱՌՈՂ»
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>	**<<ՖՈՏՈՆ>ՍՊԸ**
Հիմնադրամ	**Հասցե՝ ՀՀ,ք.Երևան, Ռոստոմի 58**
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	**Բանկ՝ <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ**
Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Տերյան մ/ճ	**Հ/Հ 16044050085000**
Հ/Հ 11500166513800	**ՀՎՀՀ 90036001**
ՀՎՀՀ 01503448	**Տնօրեն՝ Ե. Պետրոսյան**
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան	
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«24» 05 2018թ. կնքված
№ «ԳՀԱՊՁԲ-2018/2-3-1(ԵՊԲՀ)» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը**	արտադրողի անվանումը և ծագման երկիրը**	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
1	15863200	Թեյ , Princessa Gita	"Օրիմի" ՍՊԸ, ՌԴ	Թեյ սև չափածրարված: Միանգամյա օգտագործման թեյի տոպրակները տեսակավորված են 2 գ փաթեթներով: «Փունջ», բարձրորակ տեսակի, ԳOUS1938-90: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 80% արտադրման պահից:	կգ	7500	225000	30	*Մատակարարումն իրականացվում է Վաճառողի կողմից Երևան քաղաքում Գնորդի կողմից նշված հասցեով:*	30	Նախատեսվում է ձեռք բերել 2018 թվականին մասնավորապես՝ պայմանագրի կնքվելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի
2	15131100	Նրբերշիկ	«Բայազետ» ՍՊԸ, ՀՀ	Նրբերշիկ, բարձր 1-ին և 2-րդ տեսակների, պատրաստված հավի մսից: Փաթեթավորված, տուփում՝ 12 հատ: 450գր; խորը սառեցված Անվտանգությունը՝ Սան Պին 2.III-4.9-01.2003, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 80% արտադրման պահից:	կգ	1376.99	1053402	765	*Մատակարարումն իրականացվում է Վաճառողի կողմից Երևան քաղաքում Գնորդի կողմից նշված հասցեով:*	765	Նախատեսվում է ձեռք բերել 2018 թվականին մասնավորապես՝ պայմանագրի կնքվելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի
3	15111120	Քյաբաբի ֆարշ	«Բայազետ» ՍՊԸ, ՀՀ	Պատրաստված տավարի թարմ մսից,առանց կողմնակի համի և հոտի,պիտանելիության ժամկետը աղացած մսին ներկայացվող պահանջներին համապատասխան: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011, 034/2013 և 022/2011, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: Պարտադիր ներկայացնել ՀՀ կառավարության 21.10.2010թ. թիվ 1499-Ն որոշմամբ հաստատված , ձև 5 անասնաբուժական փաստաթուղթը	կգ	1500	75000	50	*Մատակարարումն իրականացվում է Վաճառողի կողմից Երևան քաղաքում Գնորդի կողմից նշված հասցեով:*	50	Նախատեսվում է ձեռք բերել 2018 թվականին մասնավորապես՝ պայմանագրի կնքվելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի
4	15851100	Սպագետի, честный	ООО «Союзпишепро	Սպագետի, բարձր որակի անդրոժ խմորից, չափածրարված , ԳOUS 875 92:	կգ	800	32000	40	*Մատակարարումն*	40	Նախատեսվում է ձեռք բերել

		продукт	м», ՌԴ	Փաթեթավորումը 5կգ-ոց պոլիէթիլենային հերմետիկ թաղանթով 2հատ, տեղադրված ստվարաթղթե ամուր 10 կգ-ոց արկղերում՝ հնգաշերտ ծալքավոր: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 90%: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2– III–4.9-01-2003 (ՌԴ Սան Պին 2.3.2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի					*իրականացվում է Վաճառողի կողմից Երևան քաղաքում Գնորդի կողմից նշված հասցեով:*		2018 թվականին մասնավորապես՝ պայմանագրի կնքվելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի
5	15872400	Լիմոնի աղ	«Սեգաֆաստ» ՍՊԸ, ՀՀ	Մսնդում օգտագործվող համային հավելանյութ Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4.9-01-2003 (ՌԴ Սան ՊԻՆ 2.3.2.107801) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի, Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 60% արտադրման պահից:	կգ	1250	1250	1	*Մատակարարումն իրականացվում է Վաճառողի կողմից Երևան քաղաքում Գնորդի կողմից նշված հասցեով:*	1	Նախատեսվում է ձեռք բերել 2018 թվականին մասնավորապես՝ պայմանագրի կնքվելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի
6	15872600	Սոդա	АО “Башкирская содовая компания” , ՌԴ	Սննդային, մանր, սպիտակ, սննդում օգտագործվող համային հավելում: : Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 60% արտադրման պահից: Գործարանային տուփերով	կգ	400	800	2	*Մատակարարումն իրականացվում է Վաճառողի կողմից Երևան քաղաքում Գնորդի կողմից նշված հասցեով:*	2	Նախատեսվում է ձեռք բերել 2018 թվականին մասնավորապես՝ պայմանագրի կնքվելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի
7	15872400	Աղ	Ավանի աղի կոմբինատ, ՀՀ	Էքստրա տեսակի յոդացված, յոդի զանգվածային մասը՝ 50±10 մգ/կգ, ՀUS 2392005: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4.9-01-2003 (ՌԴ Սան ՊԻՆ 2.3.2.107801) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի, Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 60% արտադրման պահից:	կգ	150	7500	50	*Մատակարարումն իրականացվում է Վաճառողի կողմից Երևան քաղաքում Գնորդի կողմից նշված հասցեով:*	50	Նախատեսվում է ձեռք բերել 2018 թվականին մասնավորապես՝ պայմանագրի կնքվելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի
8	15872310	Դափնե տերև	Վրաստան	Դափնե տերև, ԳOUS 17594-81: Չորացրած, խոնավության զանգվածային մասը տերևում՝ 12 %-ից ոչ ավելի, պոլիէթիլենային պարկերով: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 90% արտադրման պահից: : Անվտանգությունը և մակնշումը ՍՄ ՏԿ N 021/2011 և 022/2011, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:	կգ	1800	1800	1	*Մատակարարումն իրականացվում է Վաճառողի կողմից Երևան քաղաքում Գնորդի կողմից նշված հասցեով:*	1	Նախատեսվում է ձեռք բերել 2018 թվականին մասնավորապես՝ պայմանագրի կնքվելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի

14	15331161	Սոխ	<<	Մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի տրամագիծը 5 սմ-ից ոչ պակաս, չոր, կծու, կիսակծու կամ քաղցր, առողջ, առանց վնասվածքների	կգ	250	18250	73	*Մատակարարումն իրականացվում է Վաճառողի կողմից Երևան քաղաքում Գնորդի կողմից նշված հասցեով:*	73	Նախատեսվում է ձեռք բերել 2018 թվականին մասնավորապես՝ պայմանագրի կնքվելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի
15	15331167	Համեմ	<<	թարմ, կապով , առանց փչացած ու չորացած մասերի:	կգ	1200	12000	10	*Մատակարարումն իրականացվում է Վաճառողի կողմից Երևան քաղաքում Գնորդի կողմից նշված հասցեով:*	10	Նախատեսվում է ձեռք բերել 2018 թվականին մասնավորապես՝ պայմանագրի կնքվելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի
16	03221110	Գազար	<<	Ամբողջական, չլվացված, առողջ, մաքուր, չվնասված, սովորական տեսակի: Մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի երկարությունը առնվազն 10 սմ, տակի հատվածի տրամագիծը ոչ պակաս 3 սմ-ից: Արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավել քան ընդհանուր քանակի 3%: Առանց վնասվածքների, Թույլատրվում է շեղումներ նշված չափսերից և մեխանիկական վնասվածքներով 3 մմ ավել խորությամբ՝ ընդհանուր քանակի 5%-ից ոչ ավելի: Արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավել քան ընդհանուր քանակի 3%:	կգ	250	17500	70	*Մատակարարումն իրականացվում է Վաճառողի կողմից Երևան քաղաքում Գնորդի կողմից նշված հասցեով:*	70	Նախատեսվում է ձեռք բերել 2018 թվականին մասնավորապես՝ պայմանագրի կնքվելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի
17	03221121	Պոմիդոր	<<	Լոլիկ թարմ, ԳՕՍՏ 1725-85, ամբողջովին հասունացած, չլխկած, ամուր, չցրտահարված, առանց վնասվածքների, հողի մակերեսից ամբողջովին մաքրված, առողջ, լիովին ձևավորված, առանց հիվանդությունների, տվյալ բուսաբանական տեսակին բնորոշ կարմիր գույնով, ձևով և համ ու հոտով, առանց կողմնակի հոտի և համի: Լոլիկի գլուխները չպետք է լինեն գյուղատնտեսական վնասատուներով վնասված, առանց արևայրվածքների: Չափսերը համաձայն ԳՕՍՏ-ի: Մինչև 20 կգ-ոց փայտյա կամ պլաստմասե կամ ստվարաթղթե ամուր արկղերով: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011 և 022/2011, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ	կգ	300	10500	35	*Մատակարարումն իրականացվում է Վաճառողի կողմից Երևան քաղաքում Գնորդի կողմից նշված հասցեով:*	35	Նախատեսվում է ձեռք բերել 2018 թվականին մասնավորապես՝ պայմանագրի կնքվելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի

				հոդվածի:							
18	03221124	Վարունգ (թարմ)	ՀՀ	Վարունգ թարմ <<Կառնիշոն>> տեսակի, ԳՕՍՏ 1726-85, ամբողջովին հասունացած, չլխկած, ամուր, չցրտահարված, առանց վնասվածքների, հողի մակերեսից ամբողջովին մաքրված, առողջ, լիովին ձևավորված, առանց հիվանդությունների, տվյալ բուսաբանական տեսակին բնորոշ կանաչ գույնով, ձևով և համ ու հոտով, առանց կողմնակի հոտի և համի: Վարունգը չպետք է լինի գյուղատնտեսական վնասատուներով վնասված, առանց արևայրվածքների: Չափսերը համաձայն ԳՕՍՏ-ի: Մինչև 20 կգ-ոց ստվարաթղթե կամ պլաստմասե արկղերով: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011 և 022/2011, <<Մթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:	կգ	300	10500	35	*Մատակարարումն իրականացվում է Վաճառողի կողմից Երևան քաղաքում Գնորդի կողմից նշված հասցեով:*	35	Նախատեսվում է ձեռք բերել 2018 թվականին մասնավորապես՝ պայմանագրի կնքվելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի
19	03221410	Կաղամբ	ՀՀ	Արտաքին տեսքը՝ գլուխները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չծլած, մաքուր, մեկ բուսաբանական տեսակի, առանց վնասվածքների: 55% - վաղահաս, 45%- միջահաս: Գլուխները պետք է լինեն լիովին կազմավորված, ամուր, ոչ փխրուն և չլխկած:Գլուխների մաքրման աստիճանը՝ կաղամբի գլուխները մաքրված լինեն մինչև կանաչ և սպիտակ տերևների խիտ մակերեսը: Կաղամբակոթի երկարությունը 3սմ-ից ոչ ավելի:Մեխանիկական վնասվածքներով, ճաքերով, ցրտահարված գլուխների մթերումը չի թույլատրվում: Մաքրված գլուխների քաշը ոչ պակաս - 1 կգ-ից:	կգ	150	15000	100	*Մատակարարումն իրականացվում է Վաճառողի կողմից Երևան քաղաքում Գնորդի կողմից նշված հասցեով:*	100	Նախատեսվում է ձեռք բերել 2018 թվականին մասնավորապես՝ պայմանագրի կնքվելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի
20	03221100	Բազուկ	ՀՀ	Արտաքին տեսքը՝ արմատապտուղները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չոր, չկեղտոտված, առանց ճաքերի և վնասվածքների: Ներքին կառուցվածքը՝ միջուկը հյութալի, մուգ կարմիր՝ տարբեր երանգների: Մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի արմատապտուղների չափսերը (ամենամեծ լայնակի տրամագծով) 8-12սմ: Թույլատրվում է շեղումներ նշված չափսերից և մեխանիկական վնասվածքներով 3 մմ ավել խորությամբ՝ ընդհանուր քանակի 5%-ից ոչ ավելի: Արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավել քան ընդհանուր քանակի 3%:	կգ	150	6000	40	*Մատակարարումն իրականացվում է Վաճառողի կողմից Երևան քաղաքում Գնորդի կողմից նշված հասցեով:*	40	Նախատեսվում է ձեռք բերել 2018 թվականին մասնավորապես՝ պայմանագրի կնքվելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի
21	15311100	Կարտոֆիլ	ՀՀ	Վաղահաս և ուշահաս, I տեսակի, չցրտահարված, առանց վնասվածքների,	կգ	200	140000	700	*Մատակարարումն*	700	Նախատեսվում է ձեռք բերել 2018

				մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի տրամագիծը 6 սմ-ից ոչ պակաս, արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավել քան ընդհանուր քանակի 6%:					*իրականացվում է Վաճառողի կողմից Երևան քաղաքում Գնորդի կողմից նշված հասցեով:*		թվականին մասնավորապես՝ պայմանագրի կնքվելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի
22	03221122	Դդմիկ	ՀՀ	Մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի երկարությունը 18 սմ-ից ոչ պակաս և ոչ ավելի 23 սմ-ից, նեղ մասի տրամագիծը 6 սմ-ից ոչ ավել, թարմ, ամբողջական, մաքուր, առողջ, չթոռոմած, գյուղատնտեսական վնասատուներից չվնասված:	կգ	170	12410	73	*Մատակարարումն իրականացվում է Վաճառողի կողմից Երևան քաղաքում Գնորդի կողմից նշված հասցեով:*	73	Նախատեսվում է ձեռք բերել 2018 թվականին մասնավորապես՝ պայմանագրի կնքվելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի
23	03221120	Բիբար	ՀՀ	Մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի երկարությունը՝ 12 սմ-ից ոչ պակաս, լայն մասի տրամագիծը 4 սմ-ից ոչ պակաս, կոնաձև, կարճ պտղակոթով: Առողջ, առանց արտաքին և ներքին վնասվածքների, թարմ	կգ	350	3500	10	*Մատակարարումն իրականացվում է Վաճառողի կողմից Երևան քաղաքում Գնորդի կողմից նշված հասցեով:*	10	Նախատեսվում է ձեռք բերել 2018 թվականին մասնավորապես՝ պայմանագրի կնքվելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի
25	15332300	Ընկույզ	ՀՀ	Տեղական, մեծ կամ միջին չափսի, առանց կեղևի, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, պտուղբանջարեղենի տեխնիկական կանոնակարգի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	կգ	6000	3000	0.5	*Մատակարարումն իրականացվում է Վաճառողի կողմից Երևան քաղաքում Գնորդի կողմից նշված հասցեով:*	0.5	Նախատեսվում է ձեռք բերել 2018 թվականին մասնավորապես՝ պայմանագրի կնքվելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի
26	15331165	Սխտոր	ՀՀ	Տեղական, մեծ կամ միջին չափսի, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, Թարմ պտուղբանջարեղենի տեխնիկական կանոնակարգի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	կգ	1800	5400	3	*Մատակարարումն իրականացվում է Վաճառողի կողմից Երևան քաղաքում Գնորդի կողմից նշված հասցեով:*	3	Նախատեսվում է ձեռք բերել 2018 թվականին մասնավորապես՝ պայմանագրի կնքվելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի
27	15981500	Զովացուցիչ ըմպելիք 0,5 լ, Pepsi	ՀՀ, «Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ	12 հատ փաթեթում 0.5լ pet*12 100 լ-ում 50 կկալ, ածխաջրեր10.6՝,շաքար10.6,ճարպ0.0գ,նատրիում 0.0՝ , Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 80% արտադրման պահից:	լիտր	520	52000	100	*Մատակարարումն իրականացվում է Վաճառողի կողմից Երևան քաղաքում ՀՀ*	100	Նախատեսվում է ձեռք բերել 2018 թվականին մասնավորապես՝ պայմանագրի

									Գնորդի կողմից նշված հասցեով:		կնքվելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի
28	15981500	Զովացուցիչ ըմպելիք 0,33 լ, Pepsi	ՀՀ, «Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ	24 հատ արկղում 0.33lpet*24 100մլ-ում 50կկալ ածխաջրեր110.6՝,շաքար10.6,×ճարպ0.0՝,նմա տրիում 0.0՝ , Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 80% արտադրման պահից:	լիտր	408.96	16870	41.25	*Մատակարարումն իրականացվում է Վաճառողի կողմից Երևան քաղաքում Գնորդի կողմից նշված հասցեով:*	41.25	Նախատեսվում է ձեռք բերել 2018 թվականին մասնավորապես՝ պայմանագրի կնքվելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի
29	15981500	Զովացուցիչ ըմպելիք 0,25 լ, Pepsi	ՀՀ, «Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ	24 հատ արկղում 0.25lpet*24 100մլ-ում 50կկալ ածխաջրեր110.6՝,շաքար10.6,×ճարպ0.0՝,նմա տրիում 0.0՝ , Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 80% արտադրման պահից:	լիտր	840	110250	131.25	*Մատակարարումն իրականացվում է Վաճառողի կողմից Երևան քաղաքում Գնորդի կողմից նշված հասցեով:*	131.25	Նախատեսվում է ձեռք բերել 2018 թվականին մասնավորապես՝ պայմանագրի կնքվելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի

Եթե պայմանագրի գործողության ընթացքում մատակարարումը իրականացվում է ոչ ամբողջական քանակով, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:

Մատակարարման պայմանները.

** Մատակարարումը իրականացվում է ամեն օր: Ընդ որում, մատակարարումը իրականացվում է մինչև փյալ աշխատանքային օրվա ժամը 07.00-ն:*

** Ապրանքը(ները) մատակարարվում է Գնորդի կողմից ներկայացված պահանջագրի հիման վրա, որտեղ Գնորդի կողմից պետք է հստակ նշված լինի ձեռք բերվող ապրանքի(ների) համառոտ նկարագրությունը, չափման միավորը, քանակը: Ընդ որում, պահանջագիրը Վաճառողին տրամադրվում է յուրաքանչյուր մատակարարումից մեկ օր առաջ ժամը 10:00-ից մինչև 11.00-ն): Պահանջագիրը Վաճառողին տրամադրվում է էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցներով:*

** Ընդունել ի գիտություն, որ պայմանագիր կնքելուց հետո Վաճառողը, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի համաձայն, պետք է գրանցված լինի սննդի շղթայում ընդգրկված սննդի շղթայի օպերատորների ցանկում, ըստ անհրաժեշտության:*

** Պարտադիր է որակի սերտիֆիկատի առկայությունը կամ գործարանային փաթեթավորումը, եթե դա կիրառելի է վերոնշյալ ապրանքի(ների) համար: Ընդ որում, յուրաքանչյուր մատակարարված ապրանքի(ների) փաթեթավորման վրա պետք է մակնշված լինի արտադրող ձեռնարկության անվանումը, արտադրանքի անվանումը, տեսակը, արտադրության ժամկետը, մատակարար ձեռնարկության անվանումը, պահպանման ժամկետը, ապրանքի քաշը, օրենքով սահմանված այլ տեղեկատվություն: Բոլոր տեսակի գրառումները ֆիզիկական ներգործության արդյունքում չպետք է մաքրվեն:*

** Գնորդն իրավունք ունի յուրաքանչյուր մատակարարված ապրանքի(ների) փորձանմուշը ուղարկել փորձաքննության: Լաբորատոր հետազոտությունների արդյունքում բացասական եզրակացության ստացման դեպքում՝ ղեկավարվել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:*

Մատակարարումն իրականացվում է Վաճառողի կողմից Երևան քաղաքում Գնորդի կողմից նշված հասցեով:

**Ապրանքի փոլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետն առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան փյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Տերյան մասնաճյուղ
Հ/Հ 15001166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Վ. Մ. Մուրադյան

(ստորագրություն)
Կ.Տ

«ՎԱՃԱՌՈՂ»

<<ՖՈՏՈՆ>ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ,ք.Երևան, Ռոստոմի 58
Բանկ՝ <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 16044050085000
ՀՎՀՀ 90036001
Տնօրեն՝ Ն. Պետրոսյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված N 2
«24» 05 2018թ. կնքված
№ «ԳՀԱՊՁԲ-2018/2-3-1(ԵՊԲՀ)» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**							
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	15863200	Թեյ	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
2	15131100	Նրբերշիկ	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
3	15111120	Քյաբաբի ֆարշ	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
4	15851100	Սպագետի	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
5	15872400	Լիմոնի աղ	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%

6	15872600	Սոդա	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
7	15872400	Աղ	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
8	15872310	Դափնե տերև	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
14	15331161	Սոխ	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
15	15331167	Համեմ	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
16	03221110	Գազար	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
17	03221121	Պոմիդոր	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
18	03221124	Վարունգ (թարմ)	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
19	03221410	Կաղամբ	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
20	03221100	Բազուկ	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
21	15311100	Կարտոֆիլ	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%

22	03221122	Դդմիկ	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
23	03221120	Բիբար	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
25	15332300	Ընկույզ	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
26	15331165	Սխտոր	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
27	15981500	Զովացուցիչ ըմպելիք 0,5 լ	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
28	15981500	Զովացուցիչ ըմպելիք 0,33 լ	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
29	15981500	Զովացուցիչ ըմպելիք 0,25 լ	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով, ըստ մատակարարված քանակների*

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ,
Տերյան մ/ճ
Հ/Հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ՎԱՃԱՌՈՂ»

<<ՖՈՏՈՆ>ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ,ք.Երևան, Ռոստոմի 58
Բանկ՝ <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 16044050085000
ՀՎՀՀ 90036001
Տնօրեն՝ Ն. Պետրոսյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված N 3
« » 2018թ. կնքված
№ «ԳՀԱՊՁԲ-2018/2-3-1(ԵՊԲՀ)» *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2018թ. կնքված
№ «ԳՀԱՊՁԲ-2018/2-3-1(ԵՊԲՀ)» *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N __
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն